

ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918-20 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գևորգ Ե-ի գրագրությունը Պողոս Նուրարի և Ավետիս Ահարոնյանի հետ:
Եվրոպական դիվանագիտական շրջանակներում Հայկական Հարցի հնարա-
վոր վերարձման առթիվ Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը դեռևս 1912 թ. նո-
յեմբերի 10-ի թ. 1482 կոնդակով Պողոս Նուրարին կարգել էր իր ներկայացուցիչ և
խնդրել զանձն առնուլ երթալ ի Վեհաժողով և առաջի առնել պատգամատորաց ԵՎ-
րոպական Պետութեանց զիմնիր Հայոց և գտնեկագիր մեր, հայցելով զմիշնորդու-
թիւն նոցա առ ողբալի կացութիւն հայ ժողովրդեան Տաճկաստանի»¹:

Առաջին աշխարհամարտի տարիներին և 1918-20 թթ. Պողոս Նուրարը հարա-
բերակցության մեջ էր գտնվում Եվրոպական կառավարությունների հետ և այդ մա-
սին մշտապես տեղեկացնում կաթողիկոսին: Գևորգ Ե Սուրենյանցին գրած նա-
մակներում նա հիմնականում անդրադառնում էր արտաքին քաղաքականության
հարցերից՝ կապված Եվրոպական պետությունների՝ Հայաստանի ապագայի
մկատմամբ ունեցած դիրքորոշման հետ, օրինակ՝ 1919 թ. ապրիլի 15-ին, հուլիսի
13-ին, 1920 թ. օգոստոսի 14-ին, սեպտեմբերի 6-ին, 8-ին, 20-ին, հոկտեմբերի 21-ին²:

Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը 1918 թ. հեկտեմբերի 4-ին «լիազորի կաթո-
ղիկոսի և Զախարագամին ամենայն հայոց պատուիրակութեան» Պողոս Նուրարին
գրած նամակում հաղորդում էր Ավետիս Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրա-
կության Եվրոպա գնալու մասին, որ այն ունի իր «Հայրապետական հաճութիւնը»:
Կաթողիկոսը «լիայոյ» էր, որ երկու պատվիրակությունները կծավալեն «համե-
րաշխ ու համախոր գործունեութիւն» և որպես դրա արդյունք «անխախտ հիմունքնե-
րով հայ ազգի արդարութեան դաստ հզորապէս» կպաշտպանեն: Նույն օրն իսկ,
Գևորգ Ե Կաթողիկոսն Ավ. Ահարոնյանին գրած նամակում խնդրում էր իր կողմից
«խորին հարգանք» ողջունել Պողոս Նուրարին և նրան արտոնել Բարեկ եղած դեպ-
քում Ազգային պատվիրակության կազմը ուժեղացնելու համար հրավիրել Եղիշե և
պիսկոպոս Շուրյանին³:

Փոխադարձ կապի երկարատև բացակայության պատճառով կաթողիկոսը Ավ.
Ահարոնյանին հանձնարարել էր Պողոս Նուրարին «բերանացի» տեղեկացնել «անց
ու դարձին»⁴:

¹ Օտեամ Ե.. Պողոս Փաշա Նուրար, Կ. Պոլիս, 1919, էջ 46-47:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 196, թթ. 2-3, գ. 207, թ. 45-51, գ. 224, թթ. 13-14, 22-27, 30:

³ Նույն տեղում, գ. 185, թ. 4:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5 գ. 93, թ. 11, գ. 94, թ. 2, գ. 185, թթ. 1-2:

Վերոշարադրյալը ինքնաստիճան վկայում է Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայկական Հարցի ակնկալվող արդարացի կարգավորման Ակատմամբ հիրավի հայրապետական վերաբերմունքի մասին: Ծրչահայաց և ճկուն կաթողիկոսը շատ լավ գիտակցում էր երկու պատվիրակությունների հնարավոր առնակատման հնարավորությունը և, ըստ այդմ, նրանց կենսականորեն անհրաժեշտ համագործակցության էր կոչում: Առանձնահատուկ տեղ են գրավում Պողոս Նուրարի և Ավետիս Ահարոնյանի համատեղ գրագորությունը Գևորգ Ե Սուրենյանցի հետ, ինչը շատ հազվադեպ երևուց էր: Նման բացառություն էր 1919 թ. հուլիսի 18-ի և հուլիսի 31-ի նրանց մեռագրերը, որոնք վերաբերում էին 1919 թ. մայիսի 28-ի Միացյալ Հայաստանի ակտին⁵:

Այս խնդիրն ավելի մանրամասնեցվեց Պողոս Նուրարի 1919 թ. օգոստոսի 4-ի նամակում, որը արդեն այդ հարցը մասնավորեցվեց և քաղաքականացվեց⁶:

Ընդհանուր առմամբ, եթե Պողոս Նուրարը Հայկական Հարցի արտաքին քաղաքական կողմին և միջազգային կյանքի անցուղարձին անդրադառնում և կաթողիկոսին ներկայացնում էր հիմնականում սեփական (Ազգային պատվիրակության) տեսանկյունից, ապա Ավետիս Ահարոնյանը, բնականարար, այդ ամենը դիտարկում էր ՀՀ կառավարության և Հ.Շ.Դ. հայեցակետերից ելանով:

Եվրոպայում հայ պատվիրակների և կաթողիկոսի ունեցած կապի առումով ուշագրավ է ՀՀ ԱԳՆ-ի 1919 թ. հունվարի 12-ի համակը Գևորգ Ե Սուրենյանցին: Այդունեղ, մասնավորապես Հայկական Հարցի և Հայաստանի վիճակի ապագայի որոշման գործում Ազգային պատվիրակության կատարած աշխատանքը ԱԳՆ համարում էր «բազմակողմանի» և ունեցած դիրքն Էլ՝ «կարևոր»: Եվ, ըստ այդմ, ցանկություն էր հայտնում Ազգային պատվիրակության գործունեության վերաբերյալ «լիակատար և ստոյ» տեղեկություններ ունենալու համար ձեռք բերել նրա գրածատացած «կարևոր թղթերի, վկայագրերի, դիմումների» պատճենները: Կաթողիկոսական դիվանը արդեն 1919 թ. փետրվարի 4-ին վերջինիս փոխանցեց իր տրամադրության ներք եղած Ազգային պատվիրակության գործունեությանը վերաբերող վավերաթյերի պատճենները⁷:

Այսպիսով, Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսն անում էր այն ամենը, ինչը կնպաստեր հայկական գույգ պատվիրակությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության միջև փոխհամագործակցության հաստատման ու ամրապնդմանը: Մյուս կողմից, Պողոս Նուրարի և Ավետիս Ահարոնյանի գրագորությունը Գևորգ Ե Սուրենյանցի հետ նախ և առաջ հետապնդում էր տեղեկատվության նպատակ և վկայում վերջիններին՝ կաթողիկոսի անձի Ակատմամբ տածած խորին հարգանքի մասին:

⁵ Նույն տեղում, գ. 194, թ. 5; գ. 207, թ. 37:

⁶ Նույն տեղում, գ. 194, թ. 10-13:

⁷ Նույն տեղում, գ. 191, թ. 1:

Գևորգ Ե-ի գրագրությունը օտար անհատների և կառույցների հետ:

Նման գրագրությունը կրում էր Բիմնականում պաշտոնական, երեսն նաև անձնական բնույթ: Այդ կապն իր բովանդակությամբ լայնածավալ էր և ընդգրկում: Փոխադարձ նամակագրական կապի ընթացքում շոշափվում էին զուտ կրոնա-եկեղեցական հարցերից մինչև միջազգային ընդհանուր հշանակության հիմնախնդիրներ: Այսուհետեւ, հարաբերակցության բովանդակության գլխավոր առանցքը մնում էր Հայկական Հարցը՝ արդարացի լուծման ակնկալիքով:

Գևորգ Ե Սուրենյանցը տարավիյուն հայության ճակատագրով մտահոգ և հոգատար էր դեռևս մինչ ՀՀ հոչակումը: Դեռ 1918 թ. հունվարի 13-ին նա Պարսից շահին հայտնել էր Ղարադարի (Աստրափատական) հայոց ծանր վիճակի մասին և այդ առնչությամբ շահի «բարձր հովանաւորութիւնը հայցում Ղարադարի հայութեան Վրայ»: Միաժամանակ, Գևորգ Ե-ն խնդրում էր սանձել տեղի խաների «անհանդուրծելի ապերասամութիւնը», «զապել նոցա, պատժել և հրամայել արդարադատութեան, վերադարձնելով կողոպտված ինչը հայերին»: Պատասխանում Պարսկաստանի արտգործնախարար Մովսես Ուլ Մամելիքը փետրվարի 7-ին տեղեկացրեց, որ իր կառավարությունը նման բնույթի ոչ մի տեղեկություն չի ստացել, սակայն և այնպես «հայորդագրուած է դէաքի առթիւ հակելու վերոյիշեալ գաւառի հայերի ապահովութեան մասին»⁸:

Հանրապետության հոչակումից հետո նման բնույթի բարձրաստիճան ակտ էր Գևորգ Ե Սուրենյանցի ուղերձը Ավստրո-Հունգարիայի Կարլ և Գերմանիայի Վիլհելմ Բ կայսրերին՝ հայ ժողովողին օգնության ձեռք մեկնելու խնդրանքով: Մասնավորապես, կայսր Կարլին գրած նամակում կաթողիկոսը նշում էր հայերի կոտորած-ների մասին և նրա ուշադրությունը հրավիրում մոտ 800 հազար հայ գաղթականների ծանր դրության վրա՝ շեշտելով, որ եթե նրանք անհրաժեշտ օգնություն չատանան, ապա նրանց վիճակը աղետալի կդառնա: Նա, միաժամանակ, խնդրում էր ազգել դաշնակից Թուրքիայի Վրա, որպեսզի գաղթականներին թույլատրվի վերադառնալ իրենց հայրենիք: Այս դիմումն Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Բուրյամի միջնորդագրով սեպտեմբերի 17-ին հանձնվել էր կայսրին: Իր ներթին, Բուրյամը կայսրին հայտնում էր, որ գաղթականների՝ հայրենիք վերադառնալու ուղղությամբ դիվանագիտական ուղիներով հարկ եղած հրահանգներ արդեն արվել են⁹:

Անդրկովկասում գերմանական ներկայացուցիչ Ֆոն Կրեսը 1918 թ. հոկտեմբերի 10-ին Գևորգ Ե Սուրենյանցին հայտնել էր նրա նամակի՝ Վիլհելմ Բ կայսրին հանձնելու մասին:

Հայոց դատի հետապնդմանն էր ուղղված 1919 թ. մայիսի 17-ին Խոտակիայի թագավոր Վիկտոր-Էմանուելին Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի գրած նամակը, ո-

⁸ «Արարատ», Ս. Էջմիածին, 1918, թ. Ա-Գ, էջ 17:

⁹ՀՀ ՊԿՊԱ. Փ. 57, գ. 5, գ. 176, թթ. 22-23: Ա. Օհանջանյան, 1915 թվական, Ամերքի վկայություններ, Երևան, 1997, էջ 178-179:

որ նաև հտալիայի և ՀՀ միջև բարիդրացիական կապերի ամրապնդման ու բարգավաճման էր նպատակառող վավագած¹⁰:

ՀՀ ԱԳՆ ընդունութ քարտուղար Արքահամ Տեր-Հակոբյանը 1919 թ. հունիսի 30-ին կաթողիկոսական դիվանին տեղեկացրեց, որ Գևորգ Ե Կաթողիկոսի կողման կը 4. Պոլսում ՀՀ ներկայացուցիչ Թախտաճյանը թարգմանել է տվել հտալերեն և այն «գեղադիր» ընդորինակվել է Վեմետիկի Միհիթարյանների կողմից: Ընդ որում, Թախտաճյանն անձամբ և առանձին գրությամբ այն պետք է ներկայացներ Կ. Պոլսում հտալիայի բարձր կոմիսար Սփորցային: Ստանալով նամակը՝ Սփորցան, որ այդ ժամանակ արդեն հտալիայի արտգործնախարար էր դարձել և պետք է մեկներ Հռոմ, ասաց. «Հաճելի պարտք եմ համարում ինձ, ինեց որ հասնեմ Հռոմ, նամակը կհանձնեմ Նորին Վսեմություն Թագավորին, հաղորդեցեք կաթողիկոսին իմ խոնարի հարգանքները»¹¹:

Հտալիայի պետական նախարար Մաթթեոլին հունիսի 30-ին Վիկտոր-Էմանուելի անունից պատասխան նամակ ուղարկեց Գևորգ Ե Սուրենյանցին: Նա հայտնում էր, որ թագավորը «մասնաւորապես զգացուած է Ձեր Արքականութեան ուշադրութեան համար» և հանձնարարել է Վստահեցնել, որ «Կը պահի իբր սիրելի նույն այս թանկագին վաւերաթուղթը»: Վերջում նա հաղորդում էր «ամենաշերմ բաղանքներ Զեզ եւ Հայաստանի համար, որն անցեալում այնքան հարաբերութիւններ է ունեցել հտալիայի հետ»¹²:

Որ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը 1918-20 թթ. եղել է առաջին Հանրապետության քաղաքական անցուդարձի կարևոր կնճտրուններից մեկը՝ անվերապահ ընդունում էին ՀՀ ղեկավարությունը և օտար դիվանագետները: Հայրենին և օտարազգի բոլոր ներկայացուցիչներն իրենց պարտքն էին համարում այցելել Ս. Էջմիածին: Այդ հանգամանքն ամենահին էլ քաղաքավարության արդյունք չէր և սուս սիրալիր լինելու նպատակ չէր նետապնդում: Այսպես, 1918 թ. հունիսին Ս. Էջմիածին են այցելել գերմանական և ավստրիական ներկայացուցիչներ Ֆոն Կրեսը և ֆոն Ֆրանկենշտեյնը, ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազնունին, օգոստոսին՝ թուրքական բանակի հրամանատար Խալիլ փաշան, Երևանում թուրքական դեսպան Մեհմետ Ալի փաշան, սեպտեմբերին՝ Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին:

1919 թ. այցելել են. հունվարին՝ ֆրանսիական ներկայացուցիչ Պուադեբարը, մարտին՝ Զորավար Անդրանիկը, ապրիլ-մայիսին՝ անգլիական գեներալներ Բիչը, Միլը, Թոմսոնը, Կորին և Դևին, հունիս-օգոստոսին՝ Մակուի 6 խաները, Հունատանի ներկայացուցիչը, սեպտեմբեր-հոկտեմբերին՝ հտալական ներկայացուցիչ Գարբան, ամերիկյան ներկայացուցիչներ Վիլյամ Հասկելը և Զեյմս Հարրորդը, անգլիական ներկայացուցիչ Օլիվեր Ուորդորպը, Տրավիդոնի հույս միտրոպոլիտ Քրիստոսը, նախարարներ Արքահամ Գյուլիսանդանյանը, Նիկոլ Աղբալյանը, Սարգիս Ա-

¹⁰ ՀՀ ՊԿՄ, ֆ. 57, գ. 5, գ. 197, թթ. 1-2, 4-5, 7-8:

¹¹ Խովմը, թթ. 4-5:

¹² Խովմը, թթ. 7-8, հտալերեն ինագիրը և հայերեն թարգմանությունը:

րարատյանը: 1920 թ. ընթացքում նմանաբնույթ բարձրաստիճան ներկայացուցիչների այցելությունները ևս շարունակվեցին¹³:

1919 թ. դեկտեմբերի 14-ին անգլիացի պատմաբան և պետական գործիչ Գիբբոնը (նաև 1918 թ. ապրիլին զորավար Անդրանիկի հետ այցելել էր կաթողիկոսին) Լոնդոնից Գևորգ Ե Սուրենյանցին իր հարգանաց հավաստիքն էր հաղորդում և շնորհավորում Ս. Մանուկյանը¹⁴:

Օտար ուսումա-քաղաքական ներկայացուցիչների և եկեղեցական բարձրաստիճան գործիչների Ս. Էջմիածին այցելության մասին ՀՀ կառավարական մարմինները մշտապես կամխավ տեղեկացնում էին կաթողիկոսի դիվանին՝ Երևանի պարետ Արշա Չահիսաթունուց, ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանից մինչև ԱԳՆ¹⁵:

Որոշ օտար ներկայացուցիչների հետ Գևորգ Ե Սուրենյանցը պահպանում էր բարեկամական կապեր: Մասնավորապես, Անդրենովկասում անգլիական ներկայացուցիչ Օլիվեր Ուորդուողը Երևանում իր ներկայացուցիչ Գրենիի միջոցով 1920 թ. փետրվարի 3-ին կաթողիկոսին նվիրեց Բրիտանական թանգարանի հայերեն և վրացերեն ձեռագրերի մեծահատոր ցուցակը¹⁶:

Օտար այցելուներից շատերին Գևորգ Ե Սուրենյանցը ողջովածի և օրինության խոսքեր էր ուղղում, օրինակ՝ 1919 թ. հոկտեմբերի 1-ին՝ ֆրանսիական ներկայացուցիչ Պուադեբարին¹⁷:

Վերոշարադրյալի ենթատեքստում արժե հիշատակել Կ. Պոլսի Զավեն Պատրիարք Եղիայանի և Գևորգ Ե Սուրենյանցի գրագրությունը՝ կապված օտարազգիների գործունեության հետ: 1919 թ. մարտի 4-ին Զավեն Պատրիարքը կաթողիկոսական դիվանապետին խնդրում էր Փարիզի Վեհաժողովի ԱՄՆ-ի պատվիրակության կողմից Կովկաս ուսումնամիջության նկող Ֆ. Ռիկսին «արժանավայել» ընդունել, քանզի նաև «հայասէր» է: Խակ արդեն հոկտեմբերի 3-ին Զավեն Պատրիարքը Գևորգ Ե կաթողիկոսին հայտնում էր, որ Ամերիկայի Եկեղեցուց առաջարկ է ստացել այնուեւ գումարվելիք Եկեղեցական համագումարին մասնակցելու համար ներկայացուցիչներ ուղարկելու մասաւակով: Այս առումով, Կ. Պոլսի Ազգային Կենտրոնական Վարչության Կրոնական Ժողովը քննելով հարցը՝ գտել էր, որ խնդիրը վերաբերում է ընդհանուր Հայ Եկեղեցուն և դրա համար էլ հրավիրագրերը նույնությամբ ուղարկում են կաթողիկոսի տնօրինությանը: Իր հերթին, դիվանը նոյնմերի 29-ին պատասխանեց, որ Զավեն Պատրիարքին արտոնում են ուղարկել «խորհական և կարող» Եկեղեցականներ¹⁸:

¹³ «Էջմիածին», 1920, թ. 1, էջ 14-15; թ. 2, էջ 30-31; թ. 5, էջ 78; թ. 8, էջ 127; թ. 10, էջ 160; թ. 11, էջ 176:

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 211, թթ. 1-2:

¹⁵ Նոյն տեղում, 184, թթ. 1-2; գ. 207, թթ. 9-18, 38-39, 45, 53-56, 59, 68:

¹⁶ «Էջմիածին», 1920, թ. 6, էջ 96:

¹⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 207, թ. 64:

¹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 207, թթ. 1,3-8:

Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի օտարենի հետ ունեցած փոխադարձ գրագրությունը մեկ անգամ ևս հավաստում էր վերջիններին՝ Մայր Աթոռի և Կաթողիկոսի ամձի հանդեպ տաճած հարգալից վերաբերմունքի և Հայոց Եկեղեցու ունեցած ազդեցության պատշաճ գնահատման մասին:

Խորեն Եպիսկոպոս Մուրադբեկյանի արտասահմանյան առաքելությունները:

ՀՀ միջազգային հարաբերությունների համակարգի սահմաններում ակտիվ մասնակցությունից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներսից համապատասխան կապերի հաստատումից զայտ Եկեղեցին ունեցել է նաև արտաքին դիվանագիտական բեղուն գործունեություն: Վերջին հանգամանքը հիմնականում շաղկապված էր Երևանի փոխթեմակալ Խորեն Եպիսկոպոս Մուրադբեկյանի գործունեության հետ: Հանձին Խորեն Եպիսկոպոսի՝ Մայր Աթոռուն ունեցավ իր դիվանագետին՝ այդ բառի լայն ընդգրկմամբ և բուն Աշանակությամբ: Եթե բնորոշելու լինենք Խորեն Եպիսկոպոսին որպես դիվանագետի, անհրաժեշտ է շեշտել նրա անաշառությունը, իրապաշտությունը և անկախությունը:

Հենց այս բնորոշիչ հատկություններն էլ Խորեն Եպիսկոպոսին հնարավորություն էին ընձեռում ժամանակի լարված միջազգային հարաբերությունների համակարգում կողմնորոշվել, տալ ճիշտ գնահատականներ, լինել չեզոք, բայց սրտացավ դիտորդ, անաշառ և իրատես մասնակից: Այս ամենին դեռ հարկ է ավելացնել կուսակցական համակարգից նրա անկախությունը և միջկուսակցական պայքարին խառնվելուց հրաժարվելը: Խորեն Եպիսկոպոսի վերոնշյալ գործնական բոլոր հատկանիշներն ի հայտ եկան հատկապես Անգլիա և ԱՄՆ կատարած առաքելությունների ընթացքում, որոնց հատկանշական գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ թեպետ Հայ Եկեղեցու գործունեությունն արտաքին ասպարեզում տեղի էր ունենում պետական կառուցներից դուրս և անկախ, սակայն նպատակառուղիված ծառայում էր ՀՀ արտաքին վարկի և հեղինակության ամրապնդմանը:

Փոխթեմակալի պաշտոնը կարևորվում էր հատկապես նրամով, որ ՀՀ կառավարության և Երևանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների հետ Մայր Աթոռուն անմիջական շփումներ ու հարաբերություններ էր հաստատում հենց նրա միջոցով: Փատորեն, Խորեն Եպիսկոպոսը Երևանում Ս. Էջմիածնի յուրօրինակ դեսպանն էր: Ըստ այդմ, ՀՀ կառավարությունն արժանվում էր գնահատում Խորեն Եպիսկոպոսի նմանօրինակ դիրքը: Այդ երկուստեք համագործակցությունը սկիզբ էր առել ՀՀ առաջին կառավարության և Ազգային խորհրդի Երևան ժամանումից սկսած: Հիշյալ մարմիններին ողջունելու համար Գևորգ Ե Սուրենյանցը Երևան էր ուղարկել Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյանին: Հատկանշական է, որ պաշտոնական ընդունելությունը կատարվեց առաջնորդարանում: Խորեն Եպիսկոպոսը Հուսիկ արքեպիսկոպոսի հետ միասին այցելեցին Ազգային խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին, վարչապետ Հովհաննես Քաջազնունում, Արքին գործոց նախարար Արամ Մանուկյանին: Խորեն Եպիսկոպոսի հեղինակության մասին է վկայում այն հանգամանքը, որ նրան վատահավեց կատա-

րել Կենտրոնական և Երևանի Ազգային խորհուրդների միացյալ նիստի բացումը: Այս ամենի մասին օա 1918 թ. հուլիսի 23-ին տեղեկացրեց կաթողիկոսին¹⁹:

Այդ ընդունելության մասին դեռ հուլիսի 8-ին Գևորգ Ե Կաթողիկոսին հաղորդել էր Հովհաննեսի արքեպիսկոպոսը²⁰:

Հետագայում, Խորեն եպիսկոպոսը մշտապես մասնակցել է կառավարության կազմակերպած դիվանագիտական ընդունելություններին, որոնց ժամանակ օտարերկրյա ներկայացուցիչները կաթողիկոսի մասին միշտ արտահայտվել են խորին հարգաճքով: Մասնավորապես, Ադրբեջանի ներկայացուցիչ Թեքինսկին առաջնորդարանում կազմակերպված ընդունելության ժամանակ շեշտել է, որ ինը «Ադրեկայացել է Բայ ազգի Պետին հայտնելու որդիական ամենախոնարի հարգանաց հավաստիքը»²¹:

Նման փոխադարձ հարգալից հարաբերություններ են եղել նաև օտարերկրյա մյուս դիվանագետների մետք:

Խորեն եպիսկոպոսը հաճախ մասնակցել է ՀՀ կառավարության նիստերին: Այդ ամենի և քանարկված բոլոր հարցերի վերաբերյալ նա դիվանին մանրամասն քաղաքական վերլուծականներ էր ներկայացնում: Այսպես, կառավարության 1919 թ. դեկտեմբերի 9-ի ընդունված նիստում, որին մասնակցում էին նաև կառավարող Հ.Յ.Դ. կուսակցության բյուրոյի անդամները, Բաշվի առնելով կաթողիկոսի ազդեցիկ դիրքը՝ նիստը միաձայն ցանկություն հայտնեց, որ նա «որ այնքան սրտին մօտ է ընդունում իր սիրած Հայաստանի անկախութեան գաղափարը» - «յատուկ յորդոր» կարդա, որպեսզի Պողոս Նուբարն ընդունի միացյալ պատվիրակության նախագահի պաշտոնը և աջակցի ՀՀ կառավարությանը: Միաժամանակ, նիստում ցանկություն հայտնվեց կազմակերպել քրդական առաջնորդ Արդույ Կատերի այցելությունը Գևորգ Ե Սուրենյանցին, և որ կաթողիկոսը հայկական մանդատի առնչությամբ հարկ եղած դիմումները կատարի ամերիկյան պետական գործիչներին: Այս ամենի մասին դեկտեմբերի 17-ին Խորեն եպիսկոպոսը բավական հանգամանալից և մանրամասն քաղաքական վերլուծական ներկայացրեց Գևորգ Ե Կաթողիկոսին²²:

Խորեն եպիսկոպոսն առավել մետաքրքրվում և ակտիվ էր հատկապես արտաքին ասպարեզում կատարվող աշխատանքների հանդեպ: Նա դեռևս 1919 թ. սկզբ-ին վարչապետ Հ. Քաջազնուն առաջարկել էր Եվրոպա ուղարկել նաև մի բարձրաստիճան հոգևորական: Կաթողիկոսին հայտնելով այդ մասին՝ Խորեն եպիսկոպոսը նշում էր, որ նա թող որոշի, թե ով է գնալու, ընդ որում, հատկանշական

¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 190, թթ. 5-6; Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Բ, Խորեն Ա Մուրադիկյան, կազմեց՝ Ա. Բեմբույանը, Ե., 1996, էջ 56-57:- Այսուհետև՝ Վավերագրեր:

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 190, թթ. 1:

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 207, թթ. 2-4; Վավերագրեր, էջ 65-66:

²² Տե՛ս մանրամասն - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 205, թթ. 3-7; Վավերագրեր, էջ 76-80:

է, որ իր գնալու մասին նա վարչապետին ոչինչ չէր ասել: Այս խնդիրը որոշվեց դրական և թողնվեց վարչապետի հայեցողությանը²³:

Հետագայում, նկատի ունենալով Խորեն եպիսկոպոսի արժամիջները, Գևորգ Ե Կաթողիկոսը 1919 թ. նոյեմբերի 31-ին նրան նշանակեց լիազոր ներկայացուցիչ՝ Անգլիա և Ամերիկա գնալու, այնտեղի վիճակի վերաբերյալ գեկուցագիր կազմելու, տեղի թեմի համար նոր սահմանադրություն մշակելու և մի շարք կարևորագույն խնդիրների լուծման նպատակով²⁴:

«Հշմիածին»-ը 1920 թ. հունվարի 11-ին հաղորդում էր, որ «Ն.Ս. կարգադրութեամբ» մոտ օրերս Ամերիկա է մեկնելու Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը, որը «նշանակուած է նաև կառավարութեան ներկայացուցիչ»²⁵:

Այսպիսով, Խորեն եպիսկոպոսի առաքելությունն ուներ ինչ-որ չափով նաև պետական բնույթ:

1920 թ. մարտի 4-ին նա Բաթումից դուրս եկավ և Տրավիզոն-Կ.Պոլիս-Խոտալիա գծով մարտի 15-ին նա հասավ Փարիզ, որտեղից շտապ անցավ Լոնդոն, որ գտնվում էին Պողոս Նուրբարդ և Ավետիս Աբարոնյանը: Լոնդոնում նրա գլխավոր նպատակը «պատուիրակութեանց միացումը և համերաշխութեան գաղափարի հրագործումն» էր, որի համար ուներ կաթողիկոսի «հրամանը» և կառավարության «հրահանգը»: Սակայն, իրենից անկախ պատճառներով, գոյություն ուներ պատվիրակությունների սուր մրցակցություն, նա չկարողացավ իրագործել միացումը, որն այնքան օգտակար կլիմեր Հայ Դատի հետագա ընթացքի համար:

Այդ ժամանակ Փարիզում և Լոնդոնում էին գտնվում նաև Կ. Պոլիս Զավեն Պատրիարք Եղիայանը և Կիլիկիի Սահակ Բ Խապալյան Կաթողիկոսը, որոնք նեկել էին եվրոպական տերությունների մոտ «հարկավոր դիմումներ» անելու: Այս կապակցությամբ, Խորեն եպիսկոպոսն իրավացիորեն «շատ ցանկալի» էր գտնում, որպեսզի Գևորգ Ե Կաթողիկոսի կողմից մի հոգևորական կարգվի Եվրոպայում, որպեսզի այլևս հոգևորականներից ոչ մեկն առանց նրա «կամքի ու հրամանի» չգործի: Այս մասին Խորեն եպիսկոպոսը 1920 թ. մարտի 22-ին Լոնդոնից տեղեկացնում էր Գևորգ Ե Կաթողիկոսին²⁶:

Նա փորձառու քաղաքագետին վայել հմտությամբ ներկայացնում և վերլուծում էր ոչ միայն արտասահմանում հայ կուսակցությունների գործելակերպի տարբերությունները և առկա հակամարտությունը, այլև եվրոպական երկրների ունեցած դիրքորոշումը Հայաստանին առնչվող ամենատարբեր հարցերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Խորեն եպիսկոպոսի՝ ԱՄՆ-ում ունեցած գործունեությանը, ապա այդ մասին նա 1920 թ. հոկտեմբերի 14-ին բավականին մանրամասն երկու անգամ տեղեկացրեց Գևորգ Ե Կաթողիկոսին: Նա հայտնում էր ԱՄՆ-ի՝ ՀՀ և հայ

²³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 192, թ. 1-1 հակ.:

²⁴ Վավերագրեր, էջ 73-75:

²⁵ «Հշմիածին», 1920, թ. 2, էջ 31:

²⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 222, թթ. 1-6; Վավերագրեր, էջ 81-86:

ժողովրդի հանդեպ ունեցած վերաբերմունքի ու Ամերիկայի հայոց թեմի պառակտված վիճակի մասին: Հատկանշական է, որ դեռևս Լոնդոնում գտնվելու ժամանակ նրան խորհրդուր, չեն տվել մեկնել ԱՄՆ, քանզի այնուղի «պառակտումը չափազանց քարացած է», սակայն նա, «օգավով իր պաշտօնի լրջութիւնը և ծանր պատասխանատութիւնը», այնուամենայնիվ, որոշել էր գնալ և «ամէն զոհորութեան գնով չամալ սրբութեամբ» կատարել կաթողիկոսի պատվերը:

Ամերիկայում գտնվելու ժամանակ Խորեն եպիսկոպոսն ամերիկյան պետական այլրերին էր հանձնել Գևորգ Ե Կայսողիկոսի կոնդակները, ունեցել մի շարք հանդիպումներ դիվանագիտական շրջանակներում: Ուշագրավ է հատկապես նրա տված գնահատականները ԱՄՆ-ում ընթացող Անրքադաքական միջակցությանը, որի արդյունքում «Հայկական հարցը դարձել է ընտրական պայմանագրի խնդիր»²⁷:

Այսպիսով, մինչև աշուն տևած առաքելությունների ընթացքում Խորեն եպիսկոպոսը հնարավորության սահմաններում կատարեց այն ամենը, ինչ պետք է կայունացներ արտասահմանում միջկուսակցական պայմանը և փոխներ տարրեր տերությունների վերաբերումունքը ՀՀ Ակատմամբ: Նմանատիպ առաքելությունների շնորհիվ առանձնահատուկ շեշտվեց Եկեղեցու ունեցած դերը և նշանակությունը: Եվ օրինաչափ էր, որ Գևորգ Ե Սուրենայան Կաթողիկոսի 1920 թ. դեկտեմբերի 11-ի կոնդակով Խորեն եպիսկոպոսին շնորհվեց արքության պատիվ²⁸:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ՀՀ անկախության տոնը:

1919 թ. անկախության առաջին տարին նշվեց համաժողովրդական ընդգրրկմամբ: Տոնակատարությանն իրենց գործուն մասնակցությունը բերեցին հոգևորականները: Կառավարական հանձնաժողովի նախագահ Գևորգ Մելիք-Ղարագոյնը 1919 թ. մայիսի 24-ին դիմեց Կաթողիկոսին՝ խնդրելով ներկա գտնվել տոնակատարությանը²⁹.

Մայր Աթոռի լուսարարապետ Գարեգին եպիսկոպոսը հայտնում էր, որ կաթողիկոսի հրամանով Գարեգին եպիսկոպոս Հովսեպիյանը և Տիրայր եպիսկոպոս Տեր-Հովհաննելյանը նշանակվել են Խորին Սրբության ներկայացուցիչներ այդ տոնին ներկայանալու համար³⁰:

Իսկ Վաղարշապատի ազատության տոն կազմակերպող կոմիտեի նախագահը դիվանին ուղղված գրությամբ խնդրում էր, որ կաթողիկոսը բարեհաճի կարգադրել մաղթանք կատարել քաղաքի հրապարակում հանուն ՀՀ և հայրենիքի ազատության համար զոհված ներուսների հիշատակի³¹:

²⁷ Տե՛ս մամրամասն - ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, գ. 5, գ. 222, թթ. 8-13; գ. 223, թթ. 2-4: Վավերագրեր, էջ 87-90:

²⁸ Վավերագրեր, էջ 87-90:

²⁹ ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, գ. 5, գ. 225, թ. 3:

³⁰ Նույն տեղում, գ. 199, թ. 1:

³¹ Նույն, թ. 3:

Մինչև Երևանում մայիսի 28-ին կատարվելիք տոնակատարության սկիզբը Գ. Մելիք-Ղարագոյզյանը գեներալ Թովմաս Նազարենյանի հետ Երեք մաքնաներով գնացիք առաջնորդարան, որտեղից Գևորգ Ե Կաթողիկոսին, Խորեն եպիսկոպոսին և Կաթողիկոսի շքախմբին պատվո պահակախմբով ուղեկցեցին համդիսությունների կենտրոնատեղի, ապա վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը Գևորգ Ե Կաթողիկոսին ուղեկցեց պաղամենտի շենք, որտեղ առաջին ելույթի պատիվը տրվեց Հայոց Հայրապետին³²:

ՀՀ տարրեր շրջաններում անցկացված տոնական միջոցառումներին տեղի եկեղեցականներն ամենագործուն մասնակցությունն ունեցան: Հետագայում ևս, պետության կյանքում տեղի ունեցող բոլոր քաղաքական նշանակալից իրադարձություններին Եկեղեցու ղեկավարությունը մշտապես ներկա էր լինում: Օրինակ, 1919 թ. հուլիսի 31-ին Հայաստանի խորհրդարանի նախագահ Ավետիք Սահակյանը Գևորգ Ե Կաթողիկոսին թ. 1006 գրությամբ հայտնում է, որ «պատի ունի խնդրել կաթողիկոսին, որ բարեհաճի շնորհ բերել պաղամենտի բացմանը ներկա լինելու օգոստոսի 1-ին»³³:

Հատկանշական է, որ Խորեն եպիսկոպոսը 1919 թ. հոկտեմբերի 16-ին Գևորգ Ե Կաթողիկոսին հայտնում էր մի շատ կարևոր հանգամանք, որը հայ իրականության մեջ մեծ դեր է կատարում. այդ՝ կաթողիկոսի «վարօծ քաղաքականութիւնը և բռնած դիրքն» է ՀՀ կառավարության հանդեպ, իսկ պահ վերաբերմունքը «հիացմունք է պատճառում անկախ Հայաստանի կողմնակիցներին» ու զապում կուսակցական հաշիվներով այդ կառավարությանը «դեմ գնացողներին»: Ամփոփելով, Խորեն եպիսկոպոսը շեշտում էր, որ Գևորգ Ե Կաթողիկոսի դիրքը «մեծ արժեք ունի մեր պետութեան կայունութեան և մեր ժողովրդի համերաշխութեան համար»³⁴:

1920 թ. մայիսի 27-ին վարչապետ Համի Օհանջանյանը Գևորգ Ե Կաթողիկոսին թ. 3474 գրությամբ խնդրում էր իր ներկայությամբ «պատուիլ մայիսի 28-ի Միացեալ և Անկախ Հայաստանի ազգային մեծ տօնը»³⁵:

Պետականության համար նման կարևոր նշանակություն ունեցող տարեկիցների հանդեպ ուշադիր էր նաև «Էջմիածին» պաշտոնաթերթը: Այսպես, «ՀՀ ազատութեան տարեդարձը» խմբագրականում շեշտվում էր «բնաշնչման վերջին պահում գերմարդկային թափով, մոխիրների տակից վերածնուած հայ պետութեան» կարևորությունը: Մայիսյան տոնակատարությունների ժամանակ «հայ չարքաշ ժողովրդի հետ» Եկեղեցին ևս կատարում է «Հայոց խմելի Հայրապետների երազ-իդալների, հրաշալի տեսիլների մարմնացման տօնը» և աղոթում Աստծուն «զՀամրապետութիւն Հայաստան աշխարհի պահեա համայն ամս ի շինութեան, ի խաղաղութեան եւ

³²ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների Փաստաթյուրի Կենտրոնական Պետական Արխիվ, ֆ. 4033, ց. 7, գ. 21Ա:

³³ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 207, թ. 41:

³⁴Նույն տեղում, գ. 222, թթ. 14-15:

³⁵Նույն տեղում, գ. 225, թ. 1:

յանասամութեան»³⁶. Իսկ Արսեն ծ. վարդապետ Վեհումին, բանաստեղծական ո-ճով, բարձր գնահատելով մայիսի 28-ը՝ ՀՀ ծնունդը, այն համեմատում էր Վահագի ծննդի հետ³⁷:

ՀՀ պետականության հետ սերտորեն առնչվող մյուս կարևոր հարցը Հայաստա- մի փոխառության խնդիրն էր: Այդ առթիվ Գևորգ Ե Կաթողիկոսը 1920 թ. հովհա- պ 24-ին կողակով, որում «արտին մոտ ընդունելով այդ գործը», հորդոր էր կարդաս մեր ժողովորի «բոլոր հարազատ զաւակներին սիրով և լիառատ ընդառաջ գնալ»: Նման համաժողովորական աշակեցությունը, կաթողիկոսի համոզմամբ, պետք է ցույց տար, որ «հայունների կողտորական վերաշինութիւնը, ձեռք բերած ազատու- թիւնը շատ թանկ է բոլորին համար»³⁸:

Կաթողիկոսի այդ հայրենասիրական կոչի շարունակությունն էր Մեսրոպ ե- պիսկոպոս Տեր-Մովսիսյանի «Ազատ Հայաստանի առաջին փոխառութիւնը» հոդ- վածը: Բարձր գնահատելով փոխառության նշանակությունը, սրբազնը շնչուում էր, որ այն գալու է «վերամշակելու Հայաստանի անապատ դարձած դաշտերը, շե- նացնելու ամայութեան մատնուած Հայաստան աշխարհը»³⁹:

Վերջապես, Սևրի պալմանագիր կնքումից հետո Գևորգ Ե Կաթողիկոսը անկա- խության փոխառության ֆոնդին փոխանցեց մեկ միլիոն ռուբլի⁴⁰:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ՀՀ ճանաչումը:

1920 թ. հունվարի 23-ին ՆԳ Ասխարարի օգնական Մանասյանը կաթողիկոսա- կան դիվանին հայտնեց ՀՀ ճանաչման մասին և շնորհավորեց կաթողիկոսին⁴¹:

1920 թ. հունվարի 24-ին Գևորգ Ե Կաթողիկոսը հեռագրեց վարչապետ Ալ. Խա- տիսյանին, որ ողջունում էր Հայաստանի «քաղաքական ծնունդը» և օրինում «քա- ջարի զինուրութեանը և սիրելի հայ ժողովորին» և աղոթում «Բարձրելոյն որ արժա- նացմէ տեսմելու Մասիսի գլխին հայկական դրօշակի ծածանումն ու Միացեալ Մեծ Հայաստանի հաստատութիւնը»⁴²:

Կարսի նահանգապետ Ղորդանյանի հունվարի 24-ի Գևորգ Ե Կաթողիկոսին հղած շնորհավորական հեռագրում նշվում էր, որ «Հայոց Հայրապետութիւնը պէտք է լինի այս մնալուն և անձեռնմխելին, որի առաջ որդիական մեծ պատկառանքով կը խոնարհուի ամէն մի հայ»: Ուշագրավ է հեռագրի վերջին մասը. «Կեցցէ՛ այսօր Հայաստանը և նորա հետ անբաժան մեր սրբազնագոյն կաթողիկոսը»: Անկախութ-

³⁶ «Էջմիածին», 1920, թ. 10, էջ 145-147:

³⁷ Նույնը, էջ 147-148:

³⁸ «Հայաստանի ձայն», Ե., 1920, թ. 108:

³⁹ Նույնը, թ. 109:

⁴⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 94, թ. 13; «Էջմիածին», 1920, թ. 11, էջ 175:

⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 214, թթ. 2-3:

⁴² Նույնը, թ. 6:

յան ճամաչման առթիվ Գևորգ Ե Կաթողիկոսին շնորհավորեց նաև Կարսի փոխանորդ Կորյուն վարդապետը⁴³:

Կաթողիկոսական դիվանը հունվարի 26-ին թթ. 37-38 գրություններով պատահանեց նրանց շնորհավորական հեռագրերին⁴⁴:

Իսկ «Հջմիածին» ամսաթերթի «ՀՀ անկախությունը» խմբագրականում նշվում էր, որ «ոչ մարդասիրութեան եւ ոչ էլ փոքր ազգերի իրաւահասարութեան մի ակտ էր այս, այլ մեծ տէրութիւնների ինչ-որ քաղաքական շմբռնումների մի արդինք», որ ճանաչումը «յամենայն դէպս հայ ժողովոյի համար մի շնորհ չէր», որովհետև հայի մինչ այդ «թափած արինը, արած զոհաբերութիւնը, պատմական կուտուրական խոշոր աշխատանքը» նրան լիովի իրավունք է տվել ունենալու այդ քաղաքական ազատությունը: Այսուհանդերձ, ճանաչման փաստը դեռևս հայկական իդձերի «լիակատար թարգմանը չէ, նա կիսատ է եւ անորոշութիւններ ունի»: Այդ կիսատությունը, ըստ այդմ, կանխորոշված է «առաջմ միայն գոյություն ունեցող» ՀՀ ճանաչմանը, քանզի արևմտահայ յոթ նահանգները դուրս են մնացել այդ ճանաշումից: «Վեհաժողովը վճռում է հայկական հարցը թերի և առանց Տաճկահայատանի»:

Այս քննադատական մոտեցմանը զուգամետ ներկայացվում էին նաև «միսիթարող կողմեր», այն է՝ հայ ժողովուրդը քաղաքականութեան անկախ ապեկու «իրավունքի վկայական ստացաւ, թէեւ շատ ուշ ու արինաքամ լինելուց յետոյ»: Սփոփիիչ էր համարվում այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը «մի ազատ անկին ստացաւ երկրագնդի վիայ» և ունեցավ «շատ փոքր, սահմանափակ մի հողամաս, որի իրավունքները միջազգայնորեն ընդունվում են»: Վերջում եզրակացնում էին, որ հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին սպասում են, որ «Միացեալ եւ անկախ Հայաստանի աւետիքը կը գայ Փարիզից»⁴⁵:

Ինչ վերաբերում է անկախության ճանաչման դիվանագիտական կողմին, ապա այդ առթիվ հունվարի 28-ին Գևորգ Ե Կաթողիկոսը մի շարք շնորհավորական հեռագրեր հիեց տարրեր երկրագնդի կառավարություններին և գործիչներին⁴⁶:

Անտանտի Գերագույն Խորհրդի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին իր և հայ ժողովուրդի անունից երախստագիտություն էր հայտնում Հայաստանի անկախության համար ցուցաբերած «անկեղծ հոգատարութեան» համար: Շամաչման փաստը կաթողիկոսն ընդունում էր որպես «մարդասիրութեան եւ արդարութեան ակտ», որի մեջ տեսնում էր դաշնակիցների կողմից հայերի «արեան հեղեղների» գնով վաստակած իրավունքների ճանաչումը:

43 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 214, թթ. 2-3; «Հջմիածին», 1920, թ. 4, էջ 61:

44 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 214, թթ. 7-8:

45 «Հջմիածին», 1920, թ. 4, էջ 49-52:

46 Տես - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 214, թթ. 6, 9-16, 18-20, 23-27; գ. 222, թ. 8; Վավերագրեր, էջ 86; «Հջմիածին», 1920, թ. 4, էջ 58-62; թ. 6, էջ 96:

Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Լորդ Քերոզնին հայտնում էր շնորհակալություն, իսկ «բրիտանական մեծ ազգին ու գամին»՝ նրախտագիտություն:

Անգլիկան Ծկեղեցու պետ Քենթերենիի արքապիսկոպոսին հայտնում էր «անկեղծ շնորհակալություններ»՝ հայոց օգտին նրա «անխոնջ ջանքերի» համար, որը նրան պատիվ է բերում: Կաթողիկոսը վատահարություն էր հայտնում, որ արքապիսկոպուր չի ձգի «մեր դատոր», մինչև որ ամբողջ աշխարհի կողմից չճանաչվի «աւելի ընդարձակ Միացեալ Հայաստան»:

Հեռագրերի այս շարքում առանձնահատուկ տեղ է գրադեցնում բրիտանացի հայասեր լորդ Ջեյմս Բրայսին ուղղվածը, որը Գնորդ Ե Կաթողիկոսը հայտնում էր շնորհակալություն իր «տառապեալ ժողովրդին» նրա ցուց տված «քոլոր և համակրանքի» համար, որի «ջանքերի շնորհին» Գերագույն Խորհրդություն Հայաստանը ճանաչեց փաստացի մի պետություն: Կաթողիկոսն ավելացնում էր, որ այդ հանգամանքը «խնդրութիւն եւ յոյս» է տվել, որ շուտով պիտի գա այն օրը, եթե «աւելի ընդարձակ եւ Միացեալ Հայաստան պիտի ճանաչի ոչ միայն փաստորէն, այլև իրաւորէն»:

Ծորհավորական հեռագրեր ուղարկվեցին նաև Անդրկովկասում անգլիական, ֆրանսիական և իտալական Աերկայացուցիչներ Ուորդորպին, Նոնամնկուրին, Գարբային: Գնորդ Ե Կաթողիկոսը Հայաստանում Փարիզի Վեհաժողովի Աերկայացուցիչ ամերիկացի Հասկելին հայտնեց շնորհակալություն «հայ ազգի ֆիզիկական գոյությունը պահպանելու նրա մարդասիրական ջանքերի համար»:

Ֆրանսիայի նախագահ Պոլ Դեշանելին Գնորդ Ե Կաթողիկոսը նախ շնորհավորեց ընտրվելու առթիվ, ապա համոզմունք հայտնեց, որ նա կշրունակի իր «բարձր եւ օգտակար օժանդակութիւնը Միացեալ Հայաստանի վերստեղծման համար»:

Իր ուղարկած հեռագրերին Գնորդ Ե Կաթողիկոսը փոխադարձարար ստացավ հետևյալ պատասխանները⁴⁷:

Կ. Պոլսում ֆրանսիական բարձր կոմիսարը նախագահ Դեշանելի անունից մարտի 18-ին կաթողիկոսին շնորհակալություն հայտնեց բարի մաղթանքների համար:

Անգլիայում գտնվելու ժամանակ Խորեն նպիսկոպոսն անձամբ «մեծ հայասէրներ Ջեմս Բրայսին եւ Վիլչամսին» հայտնել էր կաթողիկոսի «Հայուապետական ողջոյնը եւ օրինութիւնները»: Երկու անգլիացիներն էլ «անչափ գոր եղան» և Խորեն եպիսկոպոսին խնդրեցին կաթողիկոսին հայտնել. «Անչափ գոր եւ հպարտ ենք զգում մեզ Ն. Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրութիւնից: Մենք պատրաստ ենք միշտ կատարել Վեհափառ Հայուապետի հրամանները եւ ծառայելու նրան, նամանաւանդ, որ հայ ժողովուրդին մենք սիրում ենք, գիտենք նրա պատմութիւնը, նրա վիճակը, նրա ընդունակութիւնը եւ հաւատում ենք նրա լաւագոյն ապագային:

⁴⁷ «Համիածին», 1920, թ. 9, էջ 144; թ. 10, էջ 159-160; թ. 11, էջ 174:

Ցայտնեցէք Վեհին, որ քանի կենդանի ենք՝ պէտք է աշխատենք օգտակար լինել նրա հօտին»⁴⁸:

Զ. Բրայսը փետրվարի 20-ին Գևորգ Ե Կաթողիկոսին գրած նամակում, որը ապրիլի 11-ին անձամբ կաթողիկոսին է հանձնում անգլիացի քահանա Հարկորդը, հայտնեց իր շնորհակալությունը և բարեմաղթամբները: Մյուս կողմից, նա տեղեկացնում էր, որ «բազմատանջ ժողովրդի բոլոր բարեկամներին մեծ հաճոյք է եղել Երեւանի հանրապետութեան ճանաչումը և այսպիսով շատ տարիների խաւարումից վերջ ազատութեան եւ անկախութեան արեգակը դարձեալ ծագում է Հայաստանի վրա» ու հայ ժողովրդին ցանկանում էր հաջողություն և բարգավաճում⁴⁹:

Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Ուորդրովը մարտի 19-ին Գևորգ Ե Կաթողիկոսին տեղեկացրեց, որ հաղորդել և լորդ Քերգոնից ստացել է պատասխան, ուր վերջինս կաթողիկոսին շնորհակալություն էր հայտնում բարի ցանկությունների համար: Ուորդրովն իր կողմից ավելացրել էր, որ կաթողիկոսը կարող է միանգամայն Վատահ լինել, որ «Մեծ Բրիտանիայի ժողովուրդն ու կառավարութիւնը ներշնչուած են ամենավսեմ հարգաճի զգացմումներով դէահ Ձերդ Սրբութիւնը եւ բարեկամութեան ու բարեացակամութեան զգացմունքով՝ դէահ հայ ժողովուրդը»⁵⁰:

1920 թ. հունիսի 1-ին Քենթքերի Արքեպիսկոպոսը Գևորգ Ե Կաթողիկոսին ուղղված նամակում տեղեկացնում էր, որ ընդունել է Զավեն Պատրիարքին և Խորեն եպիսկոպոսին ու հայտնում էր շնորհակալություն «այնքան բարի եւ սրտագի պատգամի համար»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ԱՄՆ-ի մանդատի հարցը:

Հայ-ամերիկան փոխհարաբերություններում Մայր Աթոռը ցուցաբերում էր մեծ հետաքրքրություն՝ հատկապես կապված ՀՀ Ակատմամբ ԱՄՆ-ի ակնկալվող մանդատի առթիվ: Այս պարագան լավ էր հասկանում նաև ՀՀ կառավարությունը և հարկ եղած նեպքում միշտ դիմում կաթողիկոսի աջակցությանը: Կառավարության 1919 թ. դեկտեմբերի 9-ի ընդունված նիստում, որին մասնակցում էին կառավարող Հ.Յ.Ռ. բյուրոյի անդամները և Երևանի փոխքեմակալ Խորեն եպիսկոպոսը, ի թիվս բազմաթիվ հարցերի, քննվեց նաև ամերիկան մանդատի խնդիրը հենց նշյալ տեսանկյունից: Կառավարությունը ցանկալի համարեց, որ կաթողիկոսը նոր դիմումներ նոյն ամերիկան պետական գործիչներից՝ համոզված լինելով, որ դրանք «իրանց մեծ արժեքը կ'ունենան եւ անպայման կը շտապեցնեն ամերիկեան հովանատրութեան եւ Միացեալ Մեծ Հայաստանի անկախութեան խնդրի լուծումը»: Այս մասին

48 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 6; Վավերագրեր. էջ 86:

49 «Էջմիածին», 1920, թ. 9, էջ 144:

50 Նույնը:

Գևորգ Ե Կաթողիկոսին դեկտեմբերի 22-ին տեղեկացրեց Խորեն Եպիսկոպոսը՝ փոխանցելով նաև կոնդակներ ուղարկելու ցանկալի անձանց ցուցակը⁵¹:

Քիչ անց, ՀՀ ԱԳՆ Երևանի փոխքանակալ Խորեն Եպիսկոպոսին դեկտեմբերի 26-ին պաշտոնապես տեղեկացրեց ամերիկյան գործիչների ցանկը: Ի պատասխան ՀՀ ԱԳՆ խնդրանքի՝ Գևորգ Ե Կաթողիկոսը 1919 թ. դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար թթ. 873-878 օրինության կոնդակներ հեղեղ ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, Հայաստանի Ամերիկյան Կոմիտեին ամասագար Ջեմս Ջերարդին, Միջազգային պարենավորման կոմիտեի նախագահ Հերբերտ Հովիթին, սենատորներ Հենրի Լոչին և Հիշբոկին, ՀԱԱԿ-ի մամուլի բյուրոյի քարտուղար Վահան Քարտաշյանին, ինչ 1920 թ. հունվարի 6-ին՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին թ. 903 կոնդակը⁵²:

ԱՄՆ-ում դիվանագիտական առաքելության ընթացքում Խորեն Եպիսկոպոսն անմիջականորեն գրադաւոց այդ կոնդակների համաձայն⁵³:

Նա հենց այդպես էլ տեղեկացրեց Գևորգ Ե Կաթողիկոսին. «Ամերիկա հասնելուն պէս անցայ Վաշինգտոն կատարելու Ձերդ Սրբութեան պատուէրը, կոնդակները լանձնեցի ըստ պատկանելեաց»: Ամերիկյան ժողովորդին (իմա՝ Վիլսոնին) ուղղված կոնդակը հանձնել է արտգործնախարար Կոլրիին, որն էլ, համաձայն Խորեն Եպիսկոպոսի խնդրանքի, հենց նրա ներկայությամբ կարգադրել է կոնդակը հրապարակել ամերիկյան լրագրերում: Մյուս կոնդակները Խորեն Եպիսկոպոսը հասցեատերերին է հանձնել ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ Գարեգին Փաստորմանցանի և Վ. Քարտաշյանի ընկերակցությամբ: Կոնդակները հանձնելիս Խորեն Եպիսկոպոսը բոլորին հայտնել է կաթողիկոսի «Հայրապետական ողջոյնները և Հայրական օրինությունները»; գործունակություն և շնորհակալություն՝ հայ ժողովորդին ցուց տրված օժանդակության և բարեկամական վերաբերմունքի համար: Ամերիկյան գործիչների պատասխանը հիմնականում հանգում էր հետևյալին. «Յայտնեցէք Ն. Ս., որ մենք շատ պարտականութիւններ ենք յանձն առել հանդէա հայ ժողովորդի և դժբախտաբար խօսքից գործի չենք անցել, համոզուած ենք, որ մենք խօսքից գործի կ'անցնենք, եոր կը պարզուի մեր քաղաքական դրութիւնը: Ասացէք Վեհափառ Հայրապետին, որ մենք արժանի չենք այն պատուին, որին նա մեզ արժանացնում է, բայց կ'աշխատենք արժանի լինել»:

Խորեն Եպիսկոպոսը հանդիպել է նաև Վաշինգտոնի Անգլիկան Եկեղեցու Եպիսկոպոս Հարոդինգին, որի կողմից հարգալից ընդունելության է արժանացել: Վերջինս ասել է. «Իմ յարգանքներս տարեք Հայ Առաքելական ամենահին Եկեղեցու Պետին, ասացէք, որ Անգլիկան-Եպիսկոպոսական Եկեղեցին Հայաստանեաց Եկեղեցու կրտսեր բոլորն է և մշտական բարեկամը հայ ժողովորդի»:

⁵¹ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 57, գ. 5, գ. 205, թ. 7; Վավերագրեր, էջ 80:

⁵²ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 57, գ. 5, գ. 210, թթ. 1-10:

⁵³ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 57, գ. 5, գ. 222, թթ. 11-13; Վավերագրեր, էջ 94-95:

Ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության համեմատ Եկեղեցու ոչադի վերաբերմունքի ուշագրավ վկայությունն էր նաև ՀԱԱԿ-ի նախագահ Զերարդի՝ սենատի ԱԳ ենթահանձնաժողովի նախագահ Հարոդինգին ուղղված նամակի հրապարակումը «Էջմիածին» պաշտոնաթերթում⁵⁴:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Սկրի պայմանագիրը:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Ալրում կնքվեց հաշտության պայմանագիր դաշնակից տերությունների և Օսմանյան կայսրության միջև: Այդ պայմանագիրի հայթող կողմերից մեկը ՀՀ-ն էր: Հայ ժողովորի գոկթն բոլոր հասարակական-քաղաքական խավերը ողջունեցին և դրական գնահատեցին այն: Այս հրացի առնչությամբ ևս Մայր Աթոռը գտնվեց իր բարձրության վրա:

1920 թ. սեպտեմբերի 3-ին վարչապետ Համի Օհանջանյանին ուղղված հեռուգրում Գևորգ Ե Կաթողիկոսն իր գոհունակությունն էր հայտնում այս պայմանագիրի կնքման առթիվ: Կաթողիկոսը գորում էր. «Ի սրտէ փափագող իմ սիրեցեալ ազգիս երջանկութեան եւ իմ պանծապի Հայրենիքի եւ Պետութեան բարգաւաճման եւ յարաբերութեան եւ շարունակ աղօթում էի, որ Աստուած ինձ արժանացներ տեսնել իս հայրենիքի ազատութիւնը, անկախութիւնը եւ միացումը»:

Վեհափառ Սկրի պայմանագրի կնքմամբ համարում է «մեծ Հայաստանի լրացման ակտը կատարուած» և անձամբ Մայր Տաճարում օգոստոսի 29-ին մատուցել է Ս. Պատարագ, օրինել և սրբագործել «անկախ, միացեալ եւ մեծ Հայաստանի տօնը»: Այս ամենից հետո, կաթողիկոսը Մայր Տաճարի գավթում կատարում է հայրապետական մաղթանք «մեր հայրենիքի բարգաւաճման եւ Հանրապետութեան յարատեւութեան համար»: Վերջապես, որպեսզի «իհակատար կատարած լինի Հայոց Հայրապետն իր պարտը դէպի հայրենիքը»՝ կաթողիկոսը Ս. Էջմիածինի կողմից Հայաստանի փոխառության ֆոնին տալիս է 1 միլիոն ռուբլի⁵⁵:

Գևորգ Ե Կաթողիկոսն ուխտել էր պատարագել միայն այն ժամանակ, երբ կստորագրվի «Միացեալ Անկախ Հայաստան» համար պայմանագիրը: Եվ փաստորեն, օգոստոսի 29-ին, նա կատարեց «իր սրտին այնքան մոտ սրբազն ուխտը»: Աստվածածնա Վերափոխման օրը Հայրապետը հանդիսավոր Պատարագ մատուցեց, ապա վանքի բակում հոծ բազմության առջև ՀՀ համար մաղթանք կատարեց: «Օրվա պատշաճ խօսք» ասաց դիվանապետ Կորյուն Վարդապետը⁵⁶:

Ուշագրավ էր Մայր Տաճարի գավթում արված մաղթանքի խորագիրն իսկ. «Մաղթանք վասն Հանրապետութեան Հայաստան Աշխարհի»⁵⁷:

⁵⁴ «Էջմիածին», 1920, թ. 6, էջ 84-87:

⁵⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 94, թթ. 13:

⁵⁶ «Էջմիածին», 1920, թ. 11, էջ 175:

⁵⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 225, թթ. 7-10:

Այդ «Հայրապետական մաղթանքը» Գևորգ Ե Կաթողիկոսի կարգադրությամբ ուղարկվեց թեմեր ու վիճակներ՝ «ի գործադրութեան»⁵⁸:

Հիշյալ մաղթանքի գաղափարական և տրամաբանական շարունակությունն էր զուտ նգիտուսի վիճակի համար կազմված օրինակը⁵⁹:

Տեղին է հիշատակել, որ կաթողիկոսի դիվանը դեռևս օգոստոսի 24-ին «Բրախ-րագիր» էր ուղարկել Վաղարշապատի զորական կոմիսարին՝ Բրավիրելով ներկա գտնվել Մայր Տաճարում կայանալիք համեստավոր արարողությանը և գոհարանական մաղթանքին, որը նվիրված էր «ՀՀ անկախութիւնը Փարիզի Գերագոյն Խոր-հըռոյի կողմից ճանաչուելու (Ակատի ունի Սկրի պայմանագրի կնքումը - Հ. Ա.) փաստին»: Նման Բրավիրագիր էր ուղարկվել նաև Վաղարշապատի քաղաքագիմի⁶⁰:

1920 թ. սեպտեմբերի 11-ին վարչապետ Համբ Օհանջանյանը թ. 6421 գրությամբ պատասխանեց Գևորգ Ե Կաթողիկոսի սեպտեմբերի 3-ի նեռագրին: Նա շեշտում էր, որ պայմանագրի կնքումը հայ ժողովորի «արտին ու հոգուն մէջ դրոշմելու եւ անոր խորունկ իմաստին հաղորդակից ամելու համար Մայր Աթոռուն եւ անոր Հայոցապետին բարոյական օժանդակութիւնը» ՀՀ կառավարությունը միշտ բարձր է գնահատում և, ըստ այդմ, խորին շնորհակալություն հայտնում ու ակնկալում, որ ոչ մի առիթով «Հայոց Հայրապետութիւնը չի զլանա հայրենիքի և ժողովորի բարօրութեանն, բարգաւաճմանն» ուղղված աշխատամքներում բերելու իր «քանկագին մասնակցութիւնը»: Վերջում վարչապետն առանձնակի շնորհակալություն էր հայտնում անկախության փոխառությանը տրված մեկ միլիոն ռուբլու համար⁶¹:

Սկրի պայմանագրի ստորագրումից հետո, հայ ժողովորի համար այդ նշանակալից ակտի կապակցությամբ, Զեյմս Բրայսն օգոստոսի 14-ին շնորհավորեց Գևորգ Ե Կաթողիկոսին և հայտնեց իր ուրախությունը ՀՀ որպես ազատ և անկախ երկիր ճանաչվելու առթիվ⁶²:

Իր ներթին, Պողոս Նուրբարդ սեպտեմբերի 3-ին, 6-ին, 8-ին Գևորգ Ե Կաթողիկոսին գրած նամակներում մանրամասն տեղեկացրեց Սկրի պայմանագրի կնքման, բարոյական նշանակության և ստորագրման հետ կապված առկա կուսակցական-քաղաքական որոշակի դժվարությունների մասին⁶³:

Սկրի պայմանագրի մասին Ավետիս Անհարոնյանն էլ օգոստոսի 24-ին տեղեկացրեց Կիլիկիո Սահմակ Բ Խապայան Կաթողիկոսին՝ հայտնելով, որ ՀՀ կողմից ինքն է ստորագրել: Սահմակ Բ Կաթողիկոսը պայմանագրի մերքը հայոց ստորագրության պարագան «իբր նշան ՀՀ միջազգային ճանաչման» Ակատելով, օգոստոսի 28-ին հաղորդեց. «Փառք Բարձրելոյն, որ կատարեց հայ ժողովորդեան դարաւոր

⁵⁸ «Հշմիածին», 1920, թ. 8, էջ 127:

⁵⁹ Գոհարանական մաղթանք Վասն Համբապետութեան Ազգին Հայոց, Կատարելի յԵկեղեցին Հայոց Վիճակին Եգիպտոսի, 1920, տպ. Ուկետառ:

⁶⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 222, թթ. 1-2:

⁶¹ Նույնը, թ. 16:

⁶² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 224, թթ. 16-19:

⁶³ Նույնը, թթ. 1-4, 10-11:

բաղձանքները և ընդունեց անհամար զոհաբերութիւններն անձնազոհ ჩերոս մարտիրոսներուն՝ հայրենեաց ազատութեան համար: Ընդմիշտ օրիննեալ ըլլայ սրբազն լիշտակը բոլոր անոնց, որոնք իմկան պատերազմի դաշտին կամ տարագրութեան ճամբուն վրայ: Հաղորդեցէք սրտագին շնորհաւորութիւններս ՀՀ կառավարութեան և իմ անկեղծ մայթանքներս իր ჩերոսական բանակին»⁶⁴:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին և 1920 թ. հայ-թուրքական պատերազմը:

1920 թ. աշնանը սկսված հայ-թուրքական պատերազմը ճակատագրական նշանակություն ուներ հայոց պետականության հետագա ճակատագրի և հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման տեսանկյունից: Երկրի համար օրիասական այդ պահին Մայր Աթոռ Ս. Էջմիածին և անձամբ Գևորգ Ե Կաթողիկոսի ուշադրության և մտահոգության կենտրոնում էր հայրենիքի պաշտպանության սրբազն գործը: Հոկտեմբերի 12-ին Գևորգ Ե Կաթողիկոսը հանդես եկավ «Հոգեւորական-ների մասնակցութիւնը» կոնդակով, որը հայ ժողովրդին հայրենասիրության և պայքարի էր կոչում և այդ առիթով հիշեցնում Ավարայրը՝ Աշելով, որ հետևաբար այժմ ևս պետք է կովեն Վարդանանց նման»⁶⁵:

Մինչ այդ, հոկտեմբերի 2-ին Գևորգ Ե Կաթողիկոսը թ. 558 կոնդակով հայերին կովի կոչ էր արել: Այդ կոնդակում նշվում էր, որ «հայրենիքի պայծառ հորիզոնը նորից մթնեց, խաղաղ կեանը նորից խանգարվեց» և այդ առնչությամբ հայ զորապետներին հիշեցնում էր «հայրենիքի և Եկեղեցու պաշտպան Ս. Վարդանին»: Հայ զինվորներին հայրենասեր կաթողիկոսը կոչ էր անում կովել բաշաբար, որի արդյունքում սրերով պետք է մաքրեն ճանապարհը դեպի «մոխրացեալ» Մուշն ու Սասուն, Ս. Վարապետն ու Աղթամար: Ավա տեղով իր խոսքը, կաթողիկոսը մայթում էր հայ ժողովրդին հավատով գնալ մարտի դաշտ՝ որպես օգնական ունենալով «Փրկչի Ս. Խաչը», որպես պահապամ «Ս. Լուսաւորչի Հզօր Աջը», և որպես ուղեկից «Հայոց Հայրապետի աղօթքն ու արտասութը»⁶⁶:

Այս կոնդակի մասին Գևորգ Ե Կաթողիկոսը հոկտեմբերի 3-ին հայտնեց վարչապետ Հ. Օհանջանյանին: Նա նշում էր, որ հայրենիքի համար ծանր օրերին, երբ ամեն մի հայ անհատի պարտականությունն է՝ «առանց հասակի և սեռի խորութեան» հանդես գալ նրա «պաշտպանութեան և ամբողջականութեան» պահպանման օգտին» Մայր Աթոռող գահակալով և միաբաններով իր պարտքն է համարում պատրաստի ուժեր հանդես բերել և իր ձայնը բարձրացնել ի պաշտպանություն երկրի: Վերջապես, շատ միաբաններ գնացել էին Էջմիածնի, Խոդիրի, Սարդարապատի, Ապարանի շրջաններ՝ բնակչության մեջ «խրախուսելու, ոգեւորելու և ծածկուած գինուրաներին ճակատ ուղարկելու»⁶⁷: Կաթողիկոսի կոնդակը շրջաններում

⁶⁴ Եղիայևան Բ., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1975, էջ 149:

⁶⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 94, թթ. 18-21:

⁶⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 222, թ. 30; «Էջմիածն», 1920, թ. 12, էջ 178-179:

⁶⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 222, թ. 19:

կարդացվել (օրինակ՝ Գարեգին Եպիսկոպոս Հովհանիսը՝ Ալեքսանդրապոլում և Կարսում, Եզնիկ Վարդապետը՝ Նոր Բայազետում և Բասարգէշարում) և ժողովրդի կողմից լավ ընդունելության էր արժանացել⁶⁸:

ՀՌԿ պաշտոնաթերթն արտատպելով Գևորգ Ե Կաթողիկոսի այդ կոնդակը՝ դրա վերլուծությանը նվիրեց Բատուկ Բոդված՝ «Ավարայր» վերտառությամբ⁶⁹: Գևորգ Ե Կաթողիկոսի կոնդակի հայրենասիրական ոգու շարունակությունն էր «Հշմիածին» պաշտոնաթերթի «Մի կամք, մի հոգի» խմբագրականը, որն ավարտվում էր «Մար կամ ազատութիւն» կոչով, և Գարեգին Եպիսկոպոս Հովհանիսի «Մեր թշնամիները» ու Արսեն ծ. Վարդապետի «Հայրենիքը Վտանգուած է» հոդվածները⁷⁰: Գարեգին Եպիսկոպոսը նշում էր, որ «կիսամեռ տաճիկը» ահավոր չէ հայի համար, եթե վերջինս առանց դասակարգի և սեղի խտրության «պարտքի կատարման բարձրութեան վրայ» կանգնի:

Վերոնիշյալ մտահոգության արդյունք էր նաև Գևորգ Ե Կաթողիկոսի 1920 թ. նոյեմբերի 12-ի հեռագիրը Անգլիայի թագուհուն, Խուալիայի թագավորին, Հունաստանի թագավորին, Ֆրանսիայի նախագահ Միլերանին, ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին, ՀՀ պատվիրակության նախագահ Ա.Վ. Արարունյանին, Կ. Պոլսում ՀՀ ներկայացուցիչ Թախտանյանին, Վաշինգտոնում ՀՀ ներկայացուցիչ Գ. Պաստրմանանին: Այս հեռագիրի գաղափարն առաջ էր քաշվել կաթողիկոսական դիվանի կողմից: Դիվանը նոյեմբերի 8-ին ԱԳՆ-ին հայտնում էր, որ եթե կառավարությունը «յարմար կը դատէ որ կաթողիկոսը բողոքի ձայն բարձրացնէ Սկրի դաշնագիրը ստորագրող պետութիւնների առաջ տաճկական ներկայ ուղնձգութեան դէմ», ապա ԱԳՆ պետք է խմբագրի հարկ եղած դիմումը և ուղարկի դիվանին⁷¹:

Կաթողիկոսն ուղերձում շեշտում էր, որ երկար տարիներ ազատության հույսով ապրած, տանջված հայ ժողովուրդն առաջին աշխարհամարտի ընթացքում դաշնակիցների հետ միասին կովել է ընդհանուր թշնամու դեմ, սակայն երբ Սկրի պայմանագրի համաձայն ովզում էր հայրենիք վերադառնալ՝ հանդիպեց դարավոր թշնամուն: Գևորգ Ե Կաթողիկոսը «յանուն Տիեզերքի Փրկիչի» դիմում էր դաշնակիցների «քրիստոնէական մարդասիրութեանը»՝ փրկելու Հայաստանի հայության վերջին մնացողութերին, մինչև նա «ի գօրու կը լի հիմ ի ճրգինքը պաշտպանելու»⁷²:

Ի դեպ, հայ-թուրքական պատերազմի հետևանքով ստեղծվել էր կառավարական նգամաժամ: Այդ կապակցությամբ, Բատուկանչական են Հշմիածնում նոյեմբերի 10-ին կայացած ընդհանուր ժողովի որոշումները, որոնցով Գևորգ Ե Կաթողիկոսին խնդրում էին ըստ ամենայնի աջակցել կառավարությանը հիշյալ նգամաժամը վերացնելու հարցում⁷³:

⁶⁸ Նոյմը, թթ. 20-22, 24:

⁶⁹ «Հայաստանի ձայն», Ե., 1920, թ. 157:

⁷⁰ «Հշմիածին», 1920, թ. 12, էջ 179-184:

⁷¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 222, թթ. 44-45:

⁷² Նոյմ տեղում, գ. 197, թթ. 13-14; գ. 222, թթ. 44-45:

⁷³ Նոյմ տեղում, գ. 222, թթ. 32-34:

Տեղին է հիշատակել, որ դեռևս մինչև պատերազմի սկզբնը՝ կապված հայտնի պանթուրքիստ Ասադ Կարակի (արդեն բոլշևիկ դարձած) «Գորիսի գավթնեկոմին» գրած նամակի հետ⁷⁴, Գևորգ Շ Կաթողիկոսը սեպտեմբերի 5-ին հանդես էր նկել «ՀՀ և օտար երկրների սահմաններում ապրող համայն հայութեան» ուղղված կոչով: Այդուեղ կաթողիկոսը նշում էր, որ փոխանակ «քո ու թիկունք և նեցուկ» դառնալու նորածին հայութիքին և պետությանը, որոշ դավաճաններ թշնամուն առաջնորդում են դեպի մեր երկիր: Նման «ազգակործան եւ հայունադաւ մոլորուածները», կաթողիկոսի համոզմամբ, անեծքի և նախատինքի են արժանի⁷⁵:

Այս կոչով Գևորգ Շ Կաթողիկոսը շեշտում էր նախ և առաջ ներքին թշնամու դեմ պայքարի ուղղանկարական նշանակությունը: Պատերազմի ընթացքում պայքարի և կովի կոչ անելով հանդերձ, Մայր Աթոռը, այնուամենայնիվ, ավելի շատ կարևորում էր խաղաղության հաստատման կենսական անհրաժեշտությունը նորաստեղծ պետության համար: Հիշյալ հանգամանքը շեշտում էր նաև դեռևս 1919 թ. իր հրատարակած գրքում Զավեն եպիսկոպոսը⁷⁶:

Ամփոփելով ասվածը, կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Մայր Աթոռը պետականության բացակայության ժամանակ, ընդհանուր առմամբ, ձգտել է լրացնել այդ բացը՝ իր գործունեությանը տալով համախմբիչ և ներդաշնակող, պետական երանգավորում կրող բնույթ:

2. Մայր Աթոռող հենց սկզբից գործունակությամբ ընդունեց անկախության հոչակումը և ըստ ամենայնի աջակցեց Հայոց պետության կայացմանն ու ամրապնդմանը՝ միաժամանակ քննադատելով առկա բացասական երևույթները:

3. Մայր Աթոռող ուշադրության և հոգատարության կենտրոնում էր տարասիյուն հայության ճակատագիրը: Այժմ ևս և ավելի տարողունակությամբ Ս. Էջմիածինը գլխավոր համագաղութային կառուցքն է: Այդ առումով, ափյուրքի հայապահպանաման և ՀՀ հետ հարաբերություններում աշխարհավայրու եկեղեցական կառուցքներին վերապահված է առաջնահերթ կարևորություն:

4. 1918-20 թթ. Մայր Աթոռ-կուսակցություններ հարաբերությունները հետապնդում էին երկու նպատակ՝ ա. մեղմացնել և կայունացնել միջկուսակցական սրված պայքարը, բ. պատշաճորեն գնահատել ու արժնորել Մայր Աթոռող հեղինակությունը և ազդեցությունը:

5. ՀՀ միջազգային հարաբերությունների համակարգում 1918-20 թթ. Մայր Աթոռող միանգամայն ուրում և կարևորագույն դեր ուներ և այժմ ևս Հայոց եկեղեցու սիրության կառուցքները անհրաժեշտաբար պետք է լինեն հայկական յուրօրինակ ներկայացուցչություններ:

74 «Յառաջ», Ե., 1920, թ. 189:

75 «Էջմիածին», 1920, թ. 11, էջ 161-163:

76 Զաւեն եպիսկոպոս, Պատերազմի ապագան, Ս. Էջմիածին, 1919; իսկ «Էջմիածին»-ը շեշտում էր, որ «Հայ ժողովուրդը ամէնից շատ է ձգտում խաղաղութեան», 1920, թ. 3, էջ 33-34: